ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԱՌԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ոստիկանությունը, որը գտնվում է Նալբանդյան 130 հասցեում, ստորև ներկայացնում է **ՀՀ ԿԱ Ո ԱՊՊԱ 2014/3** ծածկագրով 2013թ· դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագրում 2014թ· հունվարի 24-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն նախատեսվում են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Կնքվել է համաձայնագիր՝ 2014թ--ին կատարման ենթակա աշխատանքների ֆինանսավորման ժամանակացույցը հաստատելու մասին

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Նարա Եդիգարյանին:

Հեռախոս՝ 010 59 67 89:

Էլ. փոստ՝ police-gnumner@rambler.ru:

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ Ոստիկանություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

N ՀՀ ԿԱ Ո ԱՊՊԱ 2014/3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

<<24>> 01. **2014թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊ ընկերությունը, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Դ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 23.12.2013թ.-ին կնքված N ՀՀ ԿԱ Ո ԱՊՊԱ 2014/3 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված ծառայությունները /այսուհետև Ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունները և վճարել դրանց համար:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն համաձայնագրով Կատարողի մատուցած ծառայությունների գինը ներկայացված է Պայմանագրի 4.1 կետում: Համաձայնագրի ընդհանուր գումարը կազմում է 35 754 820 (երեսունհինգ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Պատվիրատուն 35 754 820 (երեսունհինգ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ գումարի վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	
ք. Երևան, Նալբանդյան 130	**<<ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ>>**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**ապահովագրական ՍՊ ընկերություն**
աշխատակազմի գործառնական վարչություն	**ք. Երևան, Վ. Սարգսյան 10**
Հ/Հ 900011159044	**<<Արարատբանկ>> ԲԲԸ**
ՀՎՀՀ 01533334	**Հ/Հ 1510001773040100**
հեռ. 59-68-00	**ՀՎՀՀ 00031904**
Էլ. փոստ: police-gnumner@rambler.ru	
Ա. Համբարյան	**Դ. Բաղդասարյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	**/ Գործադիր տնօրեն/**
(ստորագրություն)	

Հավելված N 1
<<24>> 01 2014թ.
Համաձայնագիր N 1
N ՀՀ ԿԱ Ո ԱՊՊԱ 2014/3գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. բյուջեից												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	Տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	10 850 867	21 701 734	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820	35 754 820
Ընդամենը														35 754 820

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159044
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-67-89
էլ. փոստ: police-gnumner@rambler.ru

Ա. Համբարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ>>
ապահովագրական ՍՊ ընկերություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 10
<<Արարատբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1510001773040100
ՀՎՀՀ 00031904

Դ. Բաղդասարյան
/ Գործադիր տնօրեն/